

ԱՐՍԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Կ. ՊՈԼՍԻ ՊՐՈԿՂ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ (5-րդ դար)

Հայ եկեղեցու պատմության համար կարևոր արժեք է ներկայացնում 5-րդ դարի Կոստանդնուպոլսի Պրոկղ պատրիարքի (434—456 թթ.) նամակը հայոց Սահակ Պարթև հայրապետին գրված: 431 թ. Եփեսոսի Գ Տիեզերական ժողովից հետո նեստորականությունը լուրջ վտանգ էր դարձել ոչ միայն Բյուզանդական կայսրության, այլ նաև Արևելքի քրիստոնեական եկեղեցիների համար: Այդ տագնապի դեմ միասնական ուժերով հանդես գալու նպատակով Պրոկղ պատրիարքը նամակ է գրում հայերին: Ինչո՞ւ էր նա դիմում հայ եկեղեցու պետին: Պատճառը մեզ հասկանալի կլինի, եթե ամփոփ ձևով, մինչ նամակի բովանդակության անցնելը, տեսնենք, թե ի՞նչպիսին է եղել հայ եկեղեցին և ի՞նչ հարաբերություններ է ունեցել հարևան և ընդհանրապես քրիստոնեական եկեղեցու խոշոր կենտրոնների հետ:

Քրիստոնեությունը Դ դարի սկզբին որպես պետական կրոն Հայաստանի տարածքի վրա կազմավորվելուց հետո, հայ եկեղեցին շարունակեց հարևան հեթանոս ժողովուրդներին ևս հաղորդակից դարձնել այդ վարդապետությանը: Քարոզչական աշխատանքները ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս դժվարին է եղել, և հայ եկեղեցական գործիչները իրենց անձնվեր գործունեությամբ հաղթահարել են այդ դժվարությունները և Քրիստոսի խոսքը հասցրել են ժողովրդի լայն զանգվածներին:

Նոր կրոնի հակառակորդները դյուրությամբ չեն զիջել իրենց դիրքերը և ամեն մի քայլի արգելքներ են հարուցել այդ ճանապարհին: Բայց հայ եկեղեցին, խորապես կառչած Քրիստոսի ճշմարիտ վարդապետությանը, միշտ էլ ներքին ուժ է գտել իր մեջ և ընդդիմացել նրանց, դեռ առաջին դարերից սկսյալ սակարկության մեջ չի դրել իր ընդունած քրիստոնեական հավատքը, այլ ամբողջ պատմության ընթացքում, ամենադժվարին պահերին իսկ, իր զավակներին առաջնորդել է միայն դեպի քրիստոնեական ճշմարտությանը: Այդ պայքարի ընթացքում նա մնացել է իր բարձրության վրա, քանի որ հանդիսացել է պաշտպանը Ավետարանի լուսավոր մտքերի և բարոյական սկզբունքների և, զինված այդ գիտությամբ, համարձակ հարաբերություններ է մշակել մյուս եկեղեցիների հետ, առաջնորդող ուղի ունենալով նաև սուրբ հայրերի գրվածքները:

Արևելքի ամենահին եկեղեցիներից մեկի, հայ եկեղեցու նույնիսկ միայն նեստորականության դեմ նրա մղած պայքարի պատմության փաստերի հետ ծանոթացումը բավական է, հասկանալու համար, թե նա ինչպիսի մեծ ծառայություն է մատուցել, որպեսզի հաղթանակի քրիստոնեական ուղղափառ դավանանքը, և որպեսզի հավա-

տացյալները ճիշտ ուղիով քայլեն և չընկնեն մոլորությունների խորխորատը։

Նեստորականության դեմ պայքարելով, հայ եկեղեցին իր դեմ էր հանում ամբողջ Արևելքը, մասնավորապես ասորիների այն հատվածը, որը դեռ վաղ դարերից ապրում էր Միջագետքում, Ասորիքում, Պարսկական կայսրության մեջ և այլ երկրներում։ Ասորիները հրեաների հետ միասին զբաղվում էին արհեստներով, առևտրով, հատկապես միջազգային առևտրով։ Նրանք քարավանների հետ միասին ճանապարհորդում էին հեռու երկրներ և շփվում այդ ժողովուրդների հետ։ Արևելքի խոշոր քաղաքներում՝ Անտիոքում, Եդեսիայում, Ալեքսանդրիայում, Արբելայում, ինչպես նաև Հայաստանում ապրում էին բազում հրեաներ[1]։ Գործք Առաքելոցից, հայկական և ասորական վաղ շրջանի աղբյուրներից իմանում ենք, որ քրիստոնյա առաջին քարոզիչները Հրեաստանից դուրս գալուց հետո քարոզչական աշխատանքներ են ծավալել առաջին հերթին հրեական շրջանակներում։ Ասորիների, հայերի, հրեաների, Արևելքի մյուս ժողովուրդների միջև եղած շփումներն ու փոխհարաբերությունները օգնել են, որ հեթանոս այդ երկրները ընդունեն քրիստոնեություն։

Քրիստոնյա այս առաջին քարոզիչների մասին շատ արժեքավոր ու հետաքրքրական մանրամասնություններ է հաղորդում մ. թ. առաջին դարի պատմիչներից Հովսեպոս Փլավիոսը, որը պատմում է, թե ինչպես Ա դարի կեսին Գալիլիայից եկած Անանիա և Եղիազար քարոզիչները Ադիաբենում[2] և Խարակս Սպասինիում տարածել են քրիստոնեական վարդապետությունը[3]։ Ճիշտ է, Հովսեպոս Փլավիոսը այդ քարոզիչներին քրիստոնյա անունը չի տալիս, բայց մեզ հայտնի է, որ քրիստոնյա անվանումը շատ ավելի ուշ է եղել։ Նա գրում է, թե ինչպես այդ քարոզիչներից մեկը, Անանիան, Խարակս Սպասինիում, Ադիաբենի Մոնոբազոս թագավորի որդուն՝ Իզատեսին, հավատափոխ է անում։ Երբ որ Իզատեսը հայրենիք է վերադառնում, Ադիաբենի մայրաքաղաք Արբելա, տեսնում է, որ իր մայրը՝ Հեղինեն, ևս քրիստոնեական նոր կրոնն էր ընդունել, մի այլ գալիլիացի քարոզիչ Եղիազարի միջոցով[4]։

Համենայն դեպս հայկական և ասորական աղբյուրներն ու ավանդությունները վկայում են, որ Հոգեգալուստից հետո Հայաստան, Եդեսիա և Արևելքի մյուս երկրները է գալիս Թադեոս առաքյալը[5], քարոզում և ի վերջո նահատակվում է Հայաստանի թագավոր Սանատրուկի կողմից։

Նրանից հետո Հայաստան է գալիս, ինչպես հայ և օտար աղբյուրներն են հաստատում, նաև Բարթողիմեոս առաքյալը[6]։ Այս առաքյալների և նրանց աշակերտների անձնվեր գործունեության շնորհիվ Արևելքի բազում քաղաքներում կազմավորվում են քրիստոնեական առաջին համայնքները[7]։ Հայ և ասորի պատմիչները՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բյուզանդը, Մովսես Խորենացին, Մշիխա Զեխան, Միքայել Ասորին, Բար Էբրայոսը մեզ տեղեկություններ են թողել քրիստոնեական այդ համայնքների վերաբերյալ։

6-րդ դարի ասորի պատմիչ Մշիխա Զեխան, որը օգտվել է 2-րդ դարի ասորական աղբյուր՝ Աբելի Աշխատությունից[8], գրում է, որ երբ Սասանյան Արտաշիր թագավորը տապալեց Պարթևների իշխանությունը 224-ին և իր ձեռքը վերցրեց երկրի ղեկը, այդ ժամանակ պարսկական տիրա-

[1] **W. Cureton**. Ancient Syriac Documents, Amsterdam, P. 34 «Ծննդոց», ԺԱ, 31. «Եզեկիէլ» Իէ., 23։ **F. Josephus**, The Antiquities of the Jews Book XX chpt, II, 1, p. 483; «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց» գիրք Բ, գլ ԼԵ Ղերուբնա Եդեսացի, Թուղթ Աբգարու. Երուսաղէմ, 1868, էջ 35։ **A. Christensen,** L'Iran sous les Sassanides. Copenhague, 1944, p. 38.

[2] Ադիաբենը գտնվում էր այժմյան Իրաքի սահմաններում, երկու գետերի՝ Մեծ և Փոքր Զաբերի միջև ընկած տարածքում։ Եղել է փոքր թագավորություն։ 216 թ. Կարակալլա կայսրը վերացնում է այն և դարձնում հռոմեական նահանգ։ Սակայն Սասանյան Արտաշիր Ա արքան վերագրավում է և այնտեղ նշանակում իր կառավարչին։

[3] **F. Josephus,** The Antiquities of Jews, Book XX, chpt. II, pp. 482, 483.

[4] **F. Josephus,** The Antiquittes of Jews, Book XX, chpt. II, pp. 482, 483. **W. Cureton** Ancient Syriac Documents. Ղերուբնա Եդեսացի։ Թուղթ Աբգարու, էջ 46։ «Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն հայոց» գիրք Բ. գլ. ԼԶ. էջ 161։ **G. Phillips,** The doctrine of Addal, Cambridge, 1868. Սոփերք Հայկականք, Ը. Վենետիկ, 1853, էջ 77։

[5] **Հ. Մելքոնյան,** Ասորական աղբյուրները հայ եկեղեցու մասին։ «Էջմիածին», 1978, № Է, ԺԱ, ԺԲ, էջ 49։

[6] Հ. **Մելքոնյան,** Ասորական աղբյուրները հայ եկեղեցու մասին, էջ 55։

[7] «Ագաթանգեղայ պատմութիւն հայոց» Տփղիս. 1909։ **Հ. Մելքոնյան,** Ասորական աղբյուրները, էջ 63։ Հայ եկեղեցու մասին 50։

Michel le Syrien, Chıonique ed. J. B. Chabot, Paris, 1963, I, p 149.

[8] **Հ. Մելքոնյան,** Ասորական աղբյուրներ, Երևան, 1976, էջ 83։

պետության մեջ արդեն գոյություն ունեին քսանից ավելի եպիսկոպոսական Աթոռներ և ի հաստատություն իր ասածի մեկ առ մեկ թվարկում է այդ եպիսկոպոսական Աթոռ ունեցող քաղաքների անունները:

Ասորական աղբյուրներում վկայություններ կան նաև հայկական շրջաններում ու քաղաքներում հիմնված քրիստոնեական համայնքների ու եկեղեցիների ստեղծման մասին[9]:

Մեզ հասած վաղ շրջանի ասորական վարքերից Թադեոս առաքյալի աշակերտներից Մար-Մարիի վարքում գրված է[10], թե ինչպես Մար-Մարին եկել է Հայաստան և Հայաստանի տարբեր շրջաններում հիմնել նոր եկեղեցիներ[11]:

Այս վկայությունները խոսում են այն մասին, թե ինչպես արևելյան այս երկրներում (Հայաստան, Պարսկաստան, Միջագետք, Ասորիք) քրիստոնեությունը կայուն հիմք էր դրել և ուներ իր կազմակերպված համայնքները, եպիսկոպոսական թեմերն ու եկեղեցիները:

4-րդ դարի սկզբին, հետևաբար, Հայաստանում ևս հող նախապատրաստվեց և այստեղ էլ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց:

Քրիստոնեության պետական կրոն հռչակվելուց հետո ս. Գր. Լուսավորիչ հայրապետը շարունակում է Թադեոս ու Բարթողիմեոս առաքյալների Հայաստանում ծավալած գործը և ինքը իր հերթին քարոզչական աշխատություններ է տանում Հայաստանում և հարևան երկրներում: Նա նոր կրոնի արմատները ժողովրդի հոգում խորը տպավորելու նպատակով գրում է նաև ջատագովական աշխատություններ[12]:

Դրան հաջորդող ծանր տարիները ստիպեցին հայ եկեղեցու հայրերին համապատասխան միջոցառումների դիմել, բացել դպրոցներ և պատրաստել մի խումբ եկեղեցական գործիչներ, որոնք և հիմքը դրեցին հայ գրի ու քրիստոնեական գրականության, հայ եկեղեցին պաշտպանելու ներքին ու արտաքին թշնամիներից: Նոր այս գործիչները, հակառակ եղած դժվարություններին, ճանապարհորդում էին ժամանակի գիտության հայտնի կենտրոններ՝ Եդեսիա, Անտիոք, Ալեքսանդրիա, Կ. Պոլիս և նույնիսկ Աթենք, կատարելագործելու իրենց ուսումը և վերադառնում էին լցված քրիստոնեական դավանաբանական գիտելիքներով և այդ ամբողջը նվիրաբերում հօգուտ իրենց և հարևան այն հեթանոս ժողովուրդներին, որոնց դեռ չէր հասել քրիստոնեության լույսը[13]: Այդ գիտելիքները էլ նրանց զինում էին, պայքարելու համար ընդդեմ աղանդավորական ու հերետիկոսական այն շարժումներին, որոնք երբեմն բռնկվում էին և անհանգստացնում ու հուզում ընդհանուր եկեղեցու հայրապետներին:

Հայ եկեղեցու գործիչների անձնվեր այդ գործունեության շնորհիվ նաև, ինչպես վկայում է 5-րդ դարի պատմիչներից Սոզոմենը, քրիստոնեությունը տարածվում է Արևելքի բազում ժողովուրդների մեջ: Նա գրում է.

«Սրանից հետո սահմանամերձ ժողովուրդներին անցավ (քրիստոնեական) վարդապետությունը և ծավալվեց: Ես նախապես ասել էի, թե ինչպես հայերը քրիստոնեությունը ընդունեցին, և պատմում են, թե ինչպես այդ ժողովրդի թագավոր Տրդատը իր ընտանիքի հետ կապված մի հրաշքի ազդեցության ներքո քրիստոնյա դարձավ և բոլոր իր հպատակներին հրամայեց պաշտել այդ հավատը: Դրանից հետո այդ վարդապետությունը անցավ հարևան ժողովուրդներին (Հայաստանից) և շատ ծավալվեց: Այժմ ես կսկսեմ պատմել, թե ինչպես պարսիկները քրիստոնեություն ընդունեցին, որոնք խառնվելով-շփվելով օսրոյենցիների ու հայերի հետ, ինչպես բնական է, այդտեղ եղած սուրբ հայրերի հետ զրուցեցին ու նրանց առաքինության մասնակից դարձան»[14]:

Սոզոմենի այս վկայությունը ցույց է տալիս, որ հայ եկեղեցին առաջին իսկ օրից հավատարիմ է մնացել Քրիստոսի պատգամին. «Գնացէք, այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս»[15]: Քարոզելով ս. Գիրքը, նա հետևել է աստվածաբանական այն ինքնուրույն ըմբռնումներին, որոնք հիմնված էին Ավետարանի, երեք Տիեզե-

[9] **Հ. Մելքոնյան,** Ասորական աղբյուրներ, էջ 83: **W. Cureton,** Ancient Syriac Documents, p. 109. **Bedjan,** Acta martyrum et sanctorum Parisiis, 1890, t. I, p. 59.

[10] Նույն տեղում, էջ 53, 59:

[11] **Bedjan,** Acta martyrum et sanctorum, t. I pp. 53, 59.

[12] Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում ճառք», Էջմիածին, 1894:

[13] «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց», Տփղիս 1904, էջ 13: **Կորիւն,** Պատմութիւն Վարուց և մահուան Սրբոյն Մեսրոպայ Վարդապետի, Վենետիկ 1894: **Н. Марр,** Крещение армян, Грузин, абхазов, и аланов Святым Григорьем, СПб., 1905.

[14] Sozomene, Histoire ecclesiastique, ed. Migne Pat. Graec.", t. LXVII, col. 956.

[15] Աւետարան ըստ Մատթէոսի, գլ. ԻԸ, 19:

բական ժողովների սկզբունքների ու՝ սուրբ հայրերի ուղղափառ մեկնությունների վրա:

Հայ եկեղեցին պայքարելով աղանդավորների, հերետիկոսների վտանգավոր ուսմունքների դեմ, հիմքը դրեց դավանաբանական ինքնուրույն գրականության, որպեսզի հնարավորություն ունենար ըստ ամենայնի ու հիմնավոր ձևով իր հավատացյալներին հեռու պահելու դավանական մոլորություններից: Այդ գործին նվիրվեցին սուրբ Սահակ Պարթև հայրապետը, սուրբ Մեսրոպ Մաշտոցը և վերջինիս աշակերտները (Կորյուն, Եզնիկ Կողբացի, Եղիշե, Մովսես Խորենացի վարդապետները և ուրիշներ): Նրանք երկարատև ու տքնաջան աշխատանքների շնորհիվ առաջին անգամ Աստվածաշունչը թարգմանեցին հայերենի: Թարգմանվեցին նաև քրիստոնեական եկեղեցու մեծ հայրապետների գրվածքներն ու մեկնությունները[16]: Հայ եկեղեցին պայքարում էր մի կողմից պարսկական կրոնի՝ զրադաշտականության վտանգի առաջն առնելու[17] և մյուս կողմից նեստորականության դեմ, որը Եփեսոսի (431 թ.) ժողովից հետո փորձում էր բռնի ուժով թափանցել Հայաստան:

Հայ եկեղեցին հավատարիմ Եփեսոսի ժողովի որոշումներին իր կարելին արեց, որպեսզի դիմադրի նեստորականների ոտնձգություններին:

Նեստորականները հալածվելով Բյուզանդական կայսրության սահմաններից, փախել, եկել ու ապաստան էին գտել Պարսկաստանում: Պարսիկները, որոնք 340 թ. սկսյալ անընդմեջ հալածում էին իրենց տերության մեջ ապրող քրիստոնյաներին, որպես Բյուզանդական կայսրության համակիր տարրերի ու լրտեսների[18], 4-րդ դարի վերջին տասնամյակներից, հատկապես 5-րդ դարի սկզբներից քրիստոնյաների նկատմամբ իրենց քաղաքականության մեջ փոփոխություն են մտցնում, նկատի ունենալով, որ նեստորականները իրենց հակաբյուզանդական տրամադրություններով ու Բյուզանդական կայսրության հանդեպ ունեցած ատելությամբ օգտակար կարող են լինել պարսկական տիրապետության շահերին: Նեստորականներն էլ Եփեսոսի ժողովից հետո ամբողջությամբ կապվեցին պարսիկների հետ և նրանց օգնությամբ փորձեցին Արևելքի մյուս եկեղեցիներն, ինչպես նաև հայ եկեղեցուն վերցնել իրենց ազդեցության ներքո:

Հայ եկեղեցու հայրերը ուժեղ դիմադրություն ցույց տվեցին և կարողացան Հայաստանը զերծ պահել նեստորականների ներթափանցումից:

Հայ եկեղեցին մեծ դեր է կատարում այդ պայքարում և այդ հանգամանքը նկատի ունենալով, այդ ժամանակվա Կ. Պոլսի պատրիարք Պրոկղը նամակ է գրում հայերին, որպեսզի վերջինները շարունակեն ամուր մնալ իրենց դիրքերի վրա:

Թեոդոս Բ. կայսրի (406—450 թթ.) մտերիմ բարեկամ Պրոկղ պատրիարքը ճանաչված ու հարգված եկեղեցական խոշոր գործիչ էր, որը երիտասարդ հասակում աշակերտել էր Հովհան Ոսկեբերան (344—407 թթ.) հայրապետին: Պրոկղ պատրիարքը խիստ հակառակորդ լինելով նեստորականության, իր անձը նվիրել էր այդ աղանդավորական ուսմունքի դեմ ծավալված պայքարին և այդ գործի հաջողության համար դիմել էր հայերին ու գրել իր նամակը, որի հայերեն օրինակը պահպանվել է հայ եկեղեցու դավանաբանական գրականության վաղ շրջանի հավաքածուներից մեկի՝ «Գիրք թղթոց»-ի մեջ[19], իսկ այդ նամակի ասորերեն տարբերակը մեզ է հասել 6-րդ դարի ասորի եկեղեցական գործիչներից Զաքարիա Հռետորի «Ժամանակագրության» միջոցով[20]:

Զաքարիա Հռետորը մատենագրության մեջ հայտնի է նաև Զաքարիա Միտիլենացի[21] անունով և նա այդպես է կոչվել, որովհետև իր կյանքի վերջին տարիներին եղել է այդ քաղաքի եպիսկոպոսը: Զաքարիան ծնվել է Գազա քաղաքից ոչ հեռու Մայումե նավահանգիստ-գյուղում: Սովորել է նախ Ալեքսանդրիայում, ապա Բեյրութի իրավաբանական դպրոցում, որը այն ժամանակ առանձին հռչակ ուներ: Զենոն կայսեր (477—491 թթ.) օրոք տեղափոխվում է Կոստանդնուպոլիս: Մեզ հայտնի է նաև այն, որ 536 թ. որպես Միտիլենի եպիսկոպոս մասնակցել է մայրաքաղաքում հրամարված եպիսկոպոսական ժողովին: Համենայն դեպս ճանաչված եկեղեցական գործիչ էր և որպես արքունիքի մոտ կանգնած անձնավորություն մասնակցել է ժա-

[16] **Հ. Գ. Զարբհանալեան,** Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ. ԺԳ), Վենետիկ, 1889:

[17] **Езник Кохбаци,** Книга опровержений (о Добре и Зле), перв. В. Чалоян, Ереван, 1968.

[18] **Bedjan** Acta martyrum et sanctorum, t. II p 248, **Հ. Մելքոնյան,** Ասորական աղբյուրներ, էջ 98:

[19] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 1:

[20] **Hamilton, Brooks,** The Syriac Chronicle known as that of Zachariah of Mitylene, London, 1899. Book II, chpt. V, p. 24.

[21] Միտիլենը Հին Հունաստանի գլխավոր քաղաքներից էր և մասն էր Էլիեն միության:

մանակի հրատապ հարցերի քննարկման ու եկեղեցական վեճերին: «Ժամանակագրություն»-ից բացի նրանից մեզ հասել են «Բանախոսություն» և մանիքեականների դեմ գրած նրա «Հակաճառություն»-ը և բազում այլ երկեր[22]: Բայց ամենաարժեքավորը «Ժամանակագրությունն» է, որը սկսում է 451 թ. դեպքերի նկարագրությամբ, ավարտում Զենոն կայսեր մահով: Դժբախտաբար հունարեն բնագիրը մեզ չի հասել և ասորի մի Անանուն հեղինակ իր պատմական երկը շարադրելիս ոչ միայն օգտվել է Զաքարիայի հունարեն բնագրից, այլև բազում գլուխներ ասորերեն թարգմանելով ամբողջությամբ մտցրել է իր երկի մեջ: Ասորի այս հեղինակի շնորհիվ էլ փրկվել են Զաքարիայի աշխատության որոշ հատվածներ: Ասորական այդ պատմական երկը բաղկացած է 12 բաժիններից: Բ բաժնի 5-րդ գլխում պահպանված է Կոստանդնուպոլսի Պրոկղ պատրիարքի նամակը: Նամակի ասորերեն բնագրի առկայությունը այս «Ժամանակագրության» մեջ գալիս է հաստատելու հայկական օրինակի վավերականությունը: Այս նամակը նաև մի վկայություն է այն մասին, որ հայ եկեղեցին արդեն 5-րդ դարում լայն կապերի մեջ էր գտնվում ընդհանուր եկեղեցու կարևոր կենտրոնների հետ:

Հայ եկեղեցու գործունեության փայլուն էջերից է այդ պայքարի պատմությունը, որը նա տարավ 5-րդ դարում ընդդեմ նեստորականության և նաև ընդդեմ Պարսկաստանի կայսրության, որը 451 թ. բռնի միջոցներով ու պատերազմական գործողություններով ուզում էր հայ ժողովրդին կտրել քրիստոնեական ուսմունքից ու նրան նորից կապել հեթանոսության: 451 թ.[23] և ապա, ինչպես Զ դարի Հովհան Եփեսացի պատմիչն է նկարագրում 571 թ.[24], դրանից հետո դարեր շարունակ ամբողջ հայ ժողովուրդը ոտքի է կանգնել և արյան գնով պաշտպանել է Քրիստոսի Ավետարանի շնորհիվ քարոզված «լույսը»:

Նեստորականության դեմ մղվող պայքարի պատմությունը աննշան մասնիկն է այն տանջալից ու չարչարանքներով լի ճանապարհի, որը և դարձավ հայ ժողովրդի ու եկեղեցու հանուն քրիստոնեության հաղթանակի դարեր շարունակ մղած պայքարի փայլուն էջերից մեկը:

«Էջմիածին» ամսագրի հաջորդ համարներից մեկում կներկայացնենք Պրոկղ պատրիարքի Հայոց Սահակ Պարթև հայրապետին գրած պատմական ու կարևոր նամակի թարգմանությունը:

---

[22] **M. A. Kugener,** La compilation historique pe pseudo Zacharie le Rhe'teur. „Revue de l'Orient chre tien", Paris. 1900.

[23] «Եղիշէի վասն Վարդանայ և հայոց պատերազմին», Երևան, 1957:

[24] **Հ. Մելքոնյան,** Ասորական աղբյուրներ, էջ 387—393: